Վիկտորյա Համբարձումյան
Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի

Ս. ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ «ԸՆԴԴԷՄ ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆԱՑ» ՃԱՌՈՒՄ*

Այս հոդվածում անդրադարձել ենք Ս. Հովհան Օձնեցու քրիստոսաբանական հայացքներին «Ընդդէմ երևութականաց» ճառում: Օձնեցի հայրապետը նշյալ ճառով հերքում է աղանդի վարդապետությունը՝ բացահայտելով մոլորությունները և դրանց ծագումնաբանական խնդիրները: Օձնեցու ծառայությունը մեծ է դավանաբանական և բարեկարգական խնդիրների պարզաբանման ասպարեզում: Օձնեցու եկեղեցանպաստ գործունեության շնորհիվ ամրակայվեցին Հայոց եկեղեցու դավանաբանական հիմքերը՝ վերջնական և ամբողջական տեսքի բերելով նրա դավանաբանական և ծիսական համակարգը, եկեղեցաբանությունը և քրիստոսաբանությունը: Այս ամենի շնորհիվ ամրապնդվեց ժողովրդի հոգևոր-բարոյական համագոյությունը և հայոց կրոնադավանական ընդհանրությունը:

Հիմնաբառեր. ճառ, երևութականներ, աղանդ, քրիստոսաբանություն, մարդեղություն, բնություն, աստվածամարդկային միություն, անճառելի:

Հովհաննես Օձնեցի կաթողիկոսն իրավամբ հանդիսանում է միջնադարյան հայ մշակույթի, մատենագրության, փիլիսոփայության, ազգային հասարակական կյանքի խոշոր դեմքերից մեկը: Նա իր գործունեությամբ, որով փայլեց թե՛ գրական, և թե՛ վարչական ասպարեզներում, մեծ հռչակ բերեց Հայոց եկեղեցուն:

*Ներկայացվում է 2017թ. դեկտեմբերի 15-ին Եվրասիա միջազգային համալսարանում տեղի ունեցած ուսանողական ամենամյա գիտաժողովի ընթացքում քննարկված նյութերի հիման վրա:

Օձնեցու՝ որպես աստվածաբանի գործունեության ոլորտներից առավելապես ինձ հետաքրքրեց հայրապետի քրիստոսաբանական հայացքները: Օձնեցի հայրապետի օրոք սուր պայքար է ծավալվել աղանդավորների դեմ: Օձնեցու ժամանակաշրջանի առավել վտանգավոր աղանդների թվին էր պատկանում երևութականությունը (docetism):

Ըստ երևութականների՝ Քրիստոսի մարդեղությունը և չարչարանքները իրական չեն, այլ երևութական և թվացյալ: Այս գաղափարախոսությունն իրենից մեծ վտանգ էր ներկայացնում, որովհետև աստվածաբանական մտքի պատմության մեջ Տիրոջ մարդեղության որևէ թերի կամ ոչ իրական խոստովանությունն անխուսափելիորեն հանգեցնում է Նրա մարդեղության լիարժեքության բացասման:

Զ–Ը դարում երևութականությունը աշխուժացել է հատկապես Հուլիանոս Հալիկառնացու անապականության վարդապետության ծայրահեղ հետևորդների կամ հուլիանոսականների շնորհիվ: Երևութականությունը տարածվել է նաև Հայաստանում՝ ձեռք բերելով բազմաթիվ հետևորդներ: Հայաստանում նրա ամենահայտնի ներկայացուցիչը Հովհան Մայրագոմեցու աշակերտ Սարգիսն էր: Սարգիս Մայրագոմեցու և նրա կողմնակիցների դեմ գրել են Թեոդորոս Քռթենավորն իր «Ընդդեմ Մայրագոմեցու»[1] գրվածքում, Խոսրովիկ Թարգմանիչը[2], սակայն նրանց գաղափարապես ջախջախման գործում վճռական դերը վերապահված էր Հովհան Օձնեցի հայրապետին, որն այս աղանդի քննադատությանն է նվիրել իր «Ընդդէմ երևութականաց» աշխատությունը: Օձնեցու նշյալ ճառն առանցքային նշանակություն է ունեցել և ունի ոչ միայն հակաաղանդավորական պայքարի տեսանկյունից, այլև աստվածաբանական, դավանաբանական կարևոր սկզբնաղբյուր է և քրիստոսաբանական հակաճառության չափօրինակ:

Ս. Հովհան Օձնեցու «Ընդդէմ երևութականաց» ճառը, ըստ իր աստվածաբանական բովանդության, բաժանելի է երկու մասի: Առաջին մասում հեղինակը խոսում է Աստվածային Բանի և Տերունական մարմնի համագոյությունը դավանողների դեմ: Խոսելով Քրիստոսի Մարմնի աննյութական լինելու վերաբերյալ երևութականների առաջ քաշած տեսակետների մասին՝ Օձնեցի հայրապետը գրում է. «Զեք ապրելու, քանի որ Տիրոջ անունով սուտ խոսեցիք (Երեմ. ԻԸ 16), ինչպես ասում է մարգարեն: Եվ ո՞ր սուտն է ավելի չար, քան Քրիստոսին մարմնով եկած չխոստովանելը: Այդպիսիներին Մեծն Հովհաննեսը կոչում է «մոլորեցուցիչ» և «նեռ» (Ա Հովհ. Դ 3): Քանզի նրանք, ում մասին է խոսքս, այնքան են տկարացնում ու նվազեցնում Քրիստոսի մարմնի մասին խորհրդածություններն ու խոսքերը, որ մինչև իսկ աչքի երևույթ են համարում մարմնացյալ Բանին, որքան հնարավոր է հասկանալ նրանց խոսքերի իմաստից: Քանզի Քրիստոսի մեջ բոլոր մարմնավոր կրքերը հանձն չեն առնում կոչել մարմնավոր կամ մարմնով, «որպեսզի,– ասում են,– մեկ Քրիստոսի երկու բնությունների ակնար-

1 Տես Մատենագիրք հայոց, Ե հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005:
2 Տես Խոսրովիկ Թարգմանիչ, Դավանաբանական երկեր, Երուսաղեմ, 2011:

կություն չանենք, այլ ինքն իսկ Բանն Աստված էր,– ասում են,–որ անցնում էր երկուսի միջով էլ՝ մարդկայինի և աստվածայինի[1]»:

Երևութականների առաջ քաշած այս պնդումներին հակառակ Օձնեցին այստեղ ընդգծում է Բանի իրական, շոշափելի մարմնացման իրողությունը: «Եթե Քրիստոս կամենում էր անմարմնապես կրել մարմնական կրքերը, էլ ինչո՞ւ մարմնացավ Կույսից՝ հղության ինամսյա ժամկետով, և ծնվելով՝ հայտնվեց որպես մանուկ»[2]:

Բանի իրական մարմնացման իրողությունը ցույց տալու համար Օձնեցի հայրապետը վկայակոչում է սուրբգրային հետևյալ համարները. «Ըստ մարմնի Դավթի սերնդից (Հռոմ. Ա 3)» «Մեծ է աստվածապաշտության խոր-հուրդը, որ հայտնվեց մարմնով» (Ա Տիմ. Գ 16) «Քրիստոսի չարչարվելը մարմնով» (Ա Պետր. Դ 1), «Թեպետ մեռավ մարմնով, բայց կենդանի է հո-գով» (Ա Պետր. Գ 18):

Երևութականների մյուս պնդումը վերաբերում է մարմնացման կերպին: Ըստ նրանց տեսության՝ Տերը «Կույսից չմարմնացավ, այլ Կույսի մեջ»: Սրա վերաբերյալ Օձնեցին ասում է. «...որպեսզի հիրավի «կույսից» ասելով, մեր բնությունը չհիշեցնեն և չներմուծեն: Իսկ ասելով «կույսի» մեջ»՝ «ուրեմն Ինքը՝ Բանն Աստուած է,– ասում են,–մարմնացած լինում Կույսի արգան-դում»: Այստեղ Օձնեցին միանգամայն տեղին հարց է տալիս. «Մարմնանալը ըստ բնությա՞ն եք վերագրում Բանին, թե՞ ըստ մեզանից վերցրածն Իրեն միավորելու: Եթե այս բնությունն ընդունեց իր բնության փոխարեն, ապա թողեց այն բնությունը, որն ուներ, ուրեմն ընդունայն է և մեր փրկության հույսը...: Իսկ ի՞նչ ես անելու հրեշտակապետի խոսքը. «Նա, ով ծնվելու է,– ասում է,– քեզանից» (Ղուկ. Ա 35), և ոչ թե՝ «քո մեջ», և թե՝ «Աստված ու-ղարկեց իր որդուն, Որը ծնվեց կնոջից» (Գաղ. Դ 4)[3] և թե՝ «Առաքվեց Աստ-ված Աստուց և հոգի ու մարմին առավ Կույսից» [4]:

Առաջնորդվելով զուտ մարդկային տրամաբանության հայտնի օրենքնե-րով՝ երևութականներն անկարելի են համարում մեկի մեջ երկու բնություն-ների գոյակցությունը: Օձնեցի հայրապետը, խոսելով այս խնդրի մասին, գտնում է, որ կարելի է ասել և՛ մի բնություն, և՛ երկու բնություն, եթե իրա-պես և բարեպաշտաբար ասվեն դրանք: Քրիստոս բաղկացած է կատարյալ մարդկային և կատարյալ աստվածային բնություններից: Հետևաբար՝ ունի երկու բնություն: Սակայն այդ բնությունները այնպես են միացել իրար, որ միությունից հետո չի կարելի խոսել երկու բնությունների մասին, այլ՝ միայն մեկ բնության:

Քրիստոս–Աստվածամարդու միությունը անձառելի և անհասանելի է մարդկային մտքի համար. «Բանը մարմին եղավ...», սակայն ինչպե՞ս. բոլոր մտքերից և խոսքերից վեր՝ անձառելիորեն և անհասությամբ: Այս սկզբուն-

1 Տես «Գանձասար», հտ Է, Սուրբ Հովհաննէս Օձնեցի Ընդդէմ Երևութականների, Երևան, 2002 էջեր 242-243:
2 Տես նույն տեղում, էջ 243:
3 Տես «Գանձասար», հտ Է, Սուրբ Հովհաննէս Օձնեցի Ընդդէմ Երևութականների, Երևան, էջեր 242-243:
4 Տես Սուրբ Գրիգորի Վարդապետությունը, Ս. Էջմիածին, 2007, էջ 77:

քային պնդումը աստվածաբանական համակարգը զերծ էր պահում մարդ-կային մտաբանություններից:

Ըստ Ս. Հովհաննես Օձնեցու, մեր դավանած «մի բնություն»ը պետք է ճիշտ հասկանալ: Թեպետ ասում ենք «Մի բնութիւն Բանին մարմնացելոյ», սակայն այդ ասելով չպետք է հասկանանք, թե մեկը վերցրվել է մյուսի կողմից, և կամ թե լուծվել են միմյանց մեջ, «ինչից և ոչ մի բնություն չի լի-նում»: Երկու բնությունների անխառը միության մասին այս միտքը առավել խոսուն ու մեծարժեք դարձնելու նպատակով Օձնեցին վկայակոչում է Եկե-ղեցու նշանավոր հայրերի հեղինակավոր խոսքեր: Այսպես՝ Օձնեցին վկա-յաբերում է ս. Գրիգոր Լուսավորչի, ս. Եփրեմ Ասորու, ս. Կյուրեղ Ալեք-սանդրացու երկերից քաղված հատվածներ: Օրինակ՝ «Թեպետև մեզ հա-մար իջավ անարգության մեջ, սակայն մնում է Իր բնության մեջ»[1]: Ինչպես երանելի Եփրեմն է ասում. «Ոչ թէ մարմինն անմարմնության փոխեց, այլ Իր մարմինն ունի այնպես, Ինչպես ծնվեց Կույսից, և այն առավել է, քան մերը՝ ըստ Բանն Աստծո հետ միաւորութեան»:

Եվ ինչպես ուսուցանում է Կյուրե Ալեքսանդրացին. «Բանը մարմնաւոր բնութեան չվերածվեց, ոչ էլ մարմնի բնութիւնը՝ Բանի, այլ երկուսն էլ մնում և իմացվում են յուրաքանչյուրն իր բնական հատկություններով՝ ըստ մեր կողմից ասված խոսքերի. Որդու բնությունը մեկ է ըստ անձառելի և ան-պատմելի միաւորության»: Յուրաքանչյուրն իր բնական հատկութեամբ ասելով նկատի ունի, որ երկուսից յուրաքանչյունը մնում է անփոփոխ, ինչ-պես որ էր: Իսկ գերազանց և սքանչելի միաւորութեան մեջ որևէ արգելք չկա... Նա, որ անմարմին Բանն էր Հորից, մարմին հագաւ սուրբ Կույս Մա-րիամից, այսինքն՝ մեր մարդկային բնությունից, որը, միաւորելով Իր դեմ-քին ու բնությանը, մարմնով հանդերձ կոչվում է մեկ դեմք ու մեկ բնութ-յուն: Հորից ծնված Բանը ոչ թե անգո կամ առանց մտքի ու անձի և առանց բնութեան վերցրեց մերը կնոջից, այլ ըստ ամենայնի կատարելապես առ-նելով՝ միաւորեց իր կատարելությանը, և այսպես մեկ կատարյալ է աս-վում՝ մեկ կենդանություն և դեմք ունենալով: Ոչ միության մեջ ուրանում եմ յուրաքանչյուրի կատարելությունը, ոչ էլ յուրաքանչյուրի կատարելության պատճառով հրաժարվում եմ խոստովանել մեկ կատարելությունը՝ միութ-յուն խոստովանելով անայլայլութեան մեջ և անայլայլությունը միության մեջ[2]:

Հավատո հանգանակում մասնավորաբար կարդում ենք. «Որ յազագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ. մար-դացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով»:

Քրիստոսի մեկ դեմք, մեկ անձ և մեկ բնություն ունենալը պայմանա-վորված է աստվածային և մարդկային բնությունների միավորման վերտ-րամաբանական, անձառելի փաստով: Այս փաստի բովանդակ անձառե-լիությունը կայանում է նրանում, որ Աստվածության հետ միավորվողը ոչ

1 Տես Ս. Գրիգորի վարդապետությունը, էջ 80:
2 Տես «Գանձասար», հտ Է, Սուրբ Հովհաննէս Օձնեցի Ընդդէմ Երևութականների, Երևան,էջեր 245-246:

թե համաբնույթ, համագո մի իրողություն է, այլ չարչարելի և մահկանացու մարմին ունեցող ադամորդին, որն իբրև կենդանի էակ ունի կրքեր կամ մարմնեղեն հատկություններ: Ավելի մանրամասնելով այս խնդիրը «Ընդդէմ Երևութականաց» ճառի երկրորդ հատվածում, Օձնեցին նախ վավերացնում է, որ մարդու մեջ բնավորված կրքերը (քաղցը, ծարավը, քունը, տրտմությունը, հոգսը երկյուղը, ցասումը) հոգեկան և մարմնական են, ուստի «մեր բնության մեջ ո՛չ ապականող են, ո՛չ էլ ապականություն» («ոչ են ապականիչք և կամ ապականութիւն բնութեանս մերում»)[1], այլ խոսքով՝ դրանք ոչ թե մահացու, այլ անգոսելի կրքեր են:

Այս միտքը Օձնեցին եզրափակում է նրանով, որ Ադամը մեղանչումից առաջ և հետո տարբեր հատկություններ չուներ, մարդկային բնությանը բնորոշ կրքերը կամ հատկանիշները «կային նախքան մեղսագործությունը, և ոչ թե հետո մտան բնության մեջ» Օձնեցին իր միտքը ամբողջացնում է հետևյալ կերպ. «ուրմեն, մեր կրքերը կրում էր ըստ իր մարմնի պահանջի, որը մեզանից վերցրեց, և ոչ թե ըստ աստվածության...»[2]:

Աստվածաբանական այս գաղափարով ճառի առաջին մասը շաղկապվում է երկրորդի հետ՝ հաստատելով, թե. «Քրիստոսի մարմինը մարդկային էր ըստ բոլոր հատկանիշների, բացի մեղքից», ուրեմն Նրա բոլոր մարդկային տնօրենությունները ճշմարիտ և իրական էին և ոչ երևութական:

Աստվածային Բանը մարդանալով՝ լիովին և կատարելապես իր վրա վերցրեց մարդկային բնության բոլոր հատկությունները՝ տկարություններով հանդերձ (բացի մահացու մեղքերից), որպեսզի ադամական մեղքի տակ հեծող մարդը կարողանա զորանալ իրեն պատկերակից դարձած Աստծո Որդու՝ Երկրորդ Ադամի միջոցով: Հերձողական բոլոր կարգի ծայրահեղությունները (այս դեպքում հուլիանոսյան, սևերյան) հետևանք են հայտնութենական իրողությունը մարդկային տրամաբանության անձուկ շրջանակի մեջ զետեղելու կամ մեկ հարթության վրա դնելու: Ուստի Հայ Եկեղեցին, խուսափելով հերձվողական այսօրինակ ծայրահեղություններից և հավատարիմ մնալով հայտնությանն ու հայրախոսական աստվածաբանությանը, ս. Հովհան Օձնեցի հայրապետի միջոցով արտահայտել է բացարձակ ճշմարտության վրա հիմնված քրիստոսաբանական իր հայեցակարգը, որին անդավաճան է մնացել դարերի ընթացքում՝ անխաթար պահելով դավանական իր նկարագիրը:

Ի մի բերելով մեր խոսքը Հովհան Օձնեցի հայրապետի քրիստոսաբանության վերաբերյալ՝ կարող ենք ասել հետևյալը՝

1. Ս. Հովհաննես Օձնեցու դավանաբանական վաստակն աչքի է ընկնում աստվածաբանական գիտելիքների փայլուն իմացությամբ, խորությամբ, մտքի սրությամբ, հարցադրումներով և փաստարկների հիմնավորվածությամբ: Օձնեցին կարողանում է տեղին և պահին պատշաճ վկայաբերումնե-

1 Տես «Գանձասար», հտ Է, Սուրբ Հովհաննէս Օձնեցի Ընդդէմ Երևութականների, Երևան, էջեր 262 –263:
2 Տես «Գանձասար», հտ է, Երևան 2002 էջ 265:

րով հաստատել աստվածաբանական այս կամ այն հիմնադրույթը՝ օգտվելով հայրախոսական հարուստ ժառանգությունից, ինչպես նաև Աստվածաշնչից համապատասխան մեջբերումներ անելով,

2. Օձնեցու քրիստոսաբանական հայացքները շարադրված են գլխավորաբար «Ընդդէմ երևութականաց» ճառում: Այն ուղղված է երևութականների կամ հուլիանոսականների դեմ: Այստեղ հեղինակը նախ մանրամասնորեն շարադրում է հակառակորդների դավանաբանական գաղափարները, ապա ժխտում դրանք և հիմնավորում Հայ Եկեղեցու որդեգրած քիստոսաբանական դրույթները, որոնց էությունն այն է. «...խոստովանում ենք Քրիստոսին՝ մի անձ, մի դեմք և մի բնություն, Հորից անմարմին Բանը սուրբ Կույս Մարիամից մարդկային բնություն վերցրեց և միավորեց իր դեմքին և բնությանը: Ասում ենք մի դեմք և մի բնություն՝ մարմնով հանդերձ»: Որպես Ադամորդի՝ Նա կրում է մարդկային մարմնին հատուկ բոլոր բնական կրքերը՝ բացի մեղքի հետևանքով գոյացած ապականացու տարրերից:

Виктория Амбарцумян
Студентка 1-ого курса магистратуры факультета Теологии Ереванского государственного университета

ХРИСТОЛОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ СВ. ОВАННА ОДЗНЕЦИ В РЕЧИ «ПРОТИВ ДОКЕТОВ»

В настоящей статье затронуты христологические взгляды Св. Ованна Одзнеци в речи «Против Докетов». В данной речи Католикос Одзнеци в данной речи опровергает учение ереси, выявляя заблуждения и проблемы их возникновения. Велика роль Одзнеци и в сфере разьяснения догматических проблем и реформ. Благодаря преданности Одзнеци церкви, были укреплены догматические основы Армянской Церкви, окончательно и целостно оформлены ее догматическая и обрядовая системы, экклесиология и христология. Благодаря всему этому укрепилась связь между духовно-нравственным сосуществованием и религиозно-догматической общностью народа.

Ключевые слова: речь, докеты, секта, христологический, вочеловечение, сущность, божий человеческий союз, неописуемый.

Viktoria Hambardzumyan
MA 1st year student, Faculty of Theology, Yerevan State University

CHRISTOLEGICAL VIEWS OF HOVHAN ODZNETSI IN HIS "AGANIS DOCETISM" SPEECH

The given article tackles upon the Christological views of Hovhan Odznetsi in his "Against Docetism" speech. In the afore mentioned speech Hovhan Odznetsi denies the doctrine of the sect revealing delusions and their genetic problems.

The contribution of Hovhan Odznetsi to the interpretation of doctrinal and improvable reparable issues.

Due to his efforts for the Armenian Church became stronger thus ultimately giving an overall description of its doctrine and ritual systems, Ecclesiology and Christology.

Thus, the spiritual and moral co-existent of the nation and Armenian doctrinal commonality strengthened.

Key words: speech, docks, sect, Christological, sect, essence, God's human union, nature,

Indescribable.